ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/8 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2013թ-ի դեկտեմբերի 26-ին կնքված պայմանագրում 2014թ-ի փետրվարի 12-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրի կողմի առաջարկությունը գնման առարկա հանդիսացող ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգվել է՝ սահմանվելով մինչև 2014թ. փետրվարի 24-ը ներառյալ:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 10.02.11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 68-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գրիգոր Ներսիսյանին:

Հեռախոս՝ 010-511-788:

Էլ. փոստ՝ datgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ *«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ*

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
26.12.2013թ. կնքված N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/8-355-1 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք.Երևան 12 փետրվարի 2014թ.

ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավարի պաշտոնակատար Կ. Փոլադյանի, որը գործում է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից և «Յունիքոմփ» ՓԲԸ-ն՝ ի դեմս՝ Ընկերության տնօրեն Ա. Բալդրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով «Յունիքոմփ» ՓԲԸ-ի 12.02.2014թ. գրությունը և 26.12.2013թ կնքված N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/8-355-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր N1) 9.3 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին Պայմանագիր N1-ում փոփոխություն կատարելու մասին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր N2) հետևյալի մասին.

1. Պայմանագիր N2-ի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի N1-ի 1-ին՝ «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Պայմանագիր N2-ն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագիր N2-ով սահմանված Կողմերի պարտավորությունների ամբողջական կատարումը: Պայմանագիր N2-ը հանդիսանում է Պայմանագիր N1-ի անբաժանելի մասը:
2.2 Պայմանագիր N2-ում չնշված՝ Պայմանագիր N1-ով Կողմերի ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:
2.3 Պայմանագիր N2-ը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին՝ մեկական օրինակ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գնորդ	Վաճառող
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ	«Յունիքոմփ» ՓԲԸ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ք. Երևան, Չարենցի 37 «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ՝ 9900011193019 ՀՎՀՀ 02583241	Հ/Հ՝ 001-021021-001 ՀՎՀՀ՝ 01815551
Ղեկավարի պաշտոնակատար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Ա. Բալդրյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված
26 դեկտեմբերի 2013թ. կնքված
N ԴԴ - ՇՀԱՊՁԲ-11/8-355-1 պայմանագրում
փոփոխություն կատարելու մասին
12.02.2014թ. պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	Չափի միավորը	Միավորի արժեքը /հազար ՀՀ դրամ/	Նախատեսվում է ձեռք բերել 2014թ. ընթացքում, այդ թվում՝	Ընդամենը	
					I եռամսյակ մինչև փետրվարի 24-ը ներառյալ	Քանակը	Գինը /հազար ՀՀ դրամ/
1	2	3	4	5	6	7	8
<ՀՀ դատական դեպարտամենտ> ՊԿՀ							
2	Կոնեկտոր	ՌՋ 45 (LAN Connector RJ45) կամ համարժեքը	հատ	0.02	500	**500**	10.0
13	<Ֆեմիդա> ձայնագրառման համակարգ	Համակարգիչ (1 հատ)՝ HP Compaq 6300 MT կամ համարժեքը(CPU Intel Pentium G2020 2,90GHz, 3 MB cache, 2 cores, HDD 500 GB 7200 SATA, DVD+/-RW, DDR3 4 GB PC3-12800), Windows 7 Pro 64 bit, Office Home and Business 2013 , մոնիտոր (1 հատ)՝ 18,5" Samsung կամ համարժեքը, Տպիչ (1 հատ)՝ HP LaserJet Pro P 1102 կամ համարժեքը, անխափան սնուցման սարք (1 հատ)՝ UPS 700 VA, Դատական ձայնագրման համակարգ "SRS Femida", ներառյալ՝ "SRS Femida" Software (ծրագիր), Ձայնային պանել " M-Audio Delta", աուդիո-կոմունիկատոր (mixer) SRS Mixer 8x4", (6 հատ) դինամիկ միկրոֆոն "SRS Voice Clear", միկրոֆոնի (6 հատ) պատվանդան, (6 հատ) աուդիո մալուխ (կաբել) 5 մ, (2 հատ) դինամիկի ականջակալներ	լրակազմ	2,222.2	10	**10**	22,222.0
ԸՆԴԱՄԵՆԸ							**22,232.0**

Պարտադիր պայման՝ ապրանքները պետք է լինեն չօգտագործված:

ԳՆՈՐԴ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011193019
ՀՎՀՀ՝ 02583241
Ղեկավարի պաշտոնակատար՝
Կ. Փոլադյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Յունիքոմփ» ՓԲԸ
ք. Երևան, Չարենցի 37
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ՝ 001-021021-001
ՀՎՀՀ՝ 01815551
Տնօրեն՝ Ա. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ